ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 2

ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈՒՂՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2012 թվականի դեկտեմբերի 2-ին Գայանե Սերոբի Վարդանյանը Ոստիկանությունում հաղորդում է ներկայացրել այն մասին, որ Վաղարշապատի սոցիալական աջակցության տարածքային գործակալության աշխատակից Արամ Հակոբի Մանուկյանը իր օգտին գործողություններ կատարելու համար, այն է՝ ընդգրկել «Փարոս» ծրագրում, պահանջել և իր աշխատասենյակում անձամբ ստացել է մեկ ամսվա սոցիալական նպաստի չափով գումար՝ 37.000 ՀՀ դրամ՝ սպառնալով, որ, եթե Վարդանյանը պահանջված գումարը 1-2 օրում չտա իրեն, կզրկի «Փարոս» ծրագրում ընդգրկվելու հնարավորությունից, չի ստանա ամսական սոցիալական օգնության նպաստները: Սակայն հետագայում Ա.Մանուկյանը, ստանալով գումարը, չի կատարել խոստումը և Գ.Վարդանյանին չի ներգրավել Փարոս ծրագրում:

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 1-ին բաժնի պետի տեղակալ Ա.Գալոյանի 2012 թվականի դեկտեմբերի 04-ի որոշմամբ քաղաքացի Գայանե Սերոբի Վարդանյանի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, այն է՝ «*Արամ Հակոբի Մանուկյանը, աշխատելով Վաղարշապատի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում, որպես տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ և ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում իրականացնելով կազմակերպչա-տնօրինչական գործառույթներ, Արմավիրի մարզի Այգեկ գյուղի բնակչուհի Գայանե Սերոբի Վարդանյանի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություններ կատարելու համար, այն է՝ ընդգրկել «Փարոս» ծրագրում, շորթմամբ Գ.Վարդանյանից պահանջել և իր աշխատասենյակում անձամբ ստացել է կաշառքի առարկան, այն է՝ մեկ ամսվա սոցիալական նպաստի չափով գումար՝ 37.000 ՀՀ դրամ, սպառնալով, որ, եթե Վարդանյանը պահանջված գումարը 1-2 օրում չտա իրեն, կզրկի «Փարոս» ծրագրում ընդգրկվելու հնարավորությունից, չի ստանա ամսական սոցիալական օգնության նպաստները»:*

04.12.2012թ. գրությամբ գործն ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն:

05.12.2012թ. Արամ Հակոբի Մանուկյանը հարցաքննվել է որպես կասկածյալ, որի ընթացքում հերքել է շորթմամբ Գ.Վարդանյանից գումար պահանջելու փաստը՝ նշելով, որ այդ առաջարկությունն առաջինը Գայանեն անձամբ է իրեն արել:

Ա.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

05.12.2012թ.-ին ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 1-ին բաժնի պետի տեղակալ Ա.Գալոյանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 04-ի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը Ա.Մանուկյանը բողոքարկել է դատարան այն պատճառաբանությամբ, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ որպես հանցանք կատարած նշվել է իր անուն-ազգանունը և այդ որոշման մեջ տրված իրավական ձևակերպումները ունեցել են այնպիսի բովանդակություն, որոնցից աներկբայորեն բխել է, որ ինքը կատարել է քրեական օրենքով արգելված արարքը: Բողոքում նշել է նաև, որ վարույթ իրականացնող մարմինը պատշաճ քննություն չի իրականացրել պարզելու համար այն, թե ումից է եկել գումարը փոխանցելու նախաձեռնությունը՝ արդյունքում քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական: Բացի այդ, վարույթ իրականացնող մարմինը ճիշտ չի գնահատել քրեական օրենսգրքի 311-րդ հոդ-

վածի հանցակազմը, ուստի՝ բացակայել է իր նկատմամբ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը:

08.12.2012թ. Ա.Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք կատարելու համար:

09.12.2012թ. Դատարանը, քննության առնելով մեղադրյալ Մանուկյանի բողոքը, որոշում է կայացրել մասնակիորեն բավարարել այն, վերացնել ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 1-ին բաժնի պետի տեղակալ Ա.Գալոյանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 04-ի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը՝ պատճառաբանելով, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ տրված ձևակերպումները, որոնցից ակնհայտ է եղել Ա.Մանուկյանի կողմից իրեն մեղսագրվող հանցագործությունը կատարելու հանգամանքը, խախտում է վերջինիս անմեղության կանխավարկածը:

Նախաքննության մարմինը, փոփոխելով քրեական գործ հարուցելու մասին որոշման ձևակերպումները, մասնավորապես, Արամ Հակոբի Մանուկյանի անվան և ազգանվան փոխարեն նշել է դրանց առաջին տառերը (Ա.Մ), իսկ ձևակերպումների առումով գործածել ոչ թե կատեգորիկ դատողություններ, այլ՝ հավանական՝ 12.12.2012թ. կրկին հարուցել է քրեական գործ: Իրականացնելով քրեական գործի քննությունը և ձեռք բերելով նույնաբովանդակ ապացույցներ՝ նախաքննական մարմինը Ա.Մանուկյանին 17.12.2012թ. կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արամ Հակոբի Մանուկյանի ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 2013թ. հուլիսի 19-ին մեղադրական եզրակացությամբ Արմավիրի մարզի դատախազությունից ուղարկվել է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության առնելու համար:

Դատարանում քրեական գործի քննության ընթացքում մեղադրող Տ.Ոսկանյանը, գնահատելով Գայանե Սերոբի Վարդանյանի՝ դատաքննության ընթացքում տրված և հետազոտված ցուցմունքն այն մասին, որ իրեն «Փարոս» ծրագրում ընդգրկելու դիմաց, 37.000 ՀՀ դրամ գումար փոխանցելու պահանջը եկել է ոչ թե Ա.Մանուկյանից, այլ այդպիսի առաջարկով առաջինը հանդես է եկել ինքը, և վերջինս էլ Ա.Մանուկյանի աշխատասենյակում անձամբ փոխանցել է նրան մեկ ամսվա սոցիալական նպաստի չափով գումարը, ինչպես նաև դատարանում հետազոտված այն ապացույցները, որոնցով բացահայտվել և հիմնավորվել է Ա.Մանուկյանի կողմից 2011 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված այլ արարք կատարելու դեպքը (պաշտոնեական կեղծիք), առ այն, որ վերջինս կազմել և շրջանառության մեջ է դրել պաշտոնական կեղծ փաստաթուղթ՝ այդկերպ Գ.Գասպարյանին իրավունք վերապահելով մեկ տարի անընդմեջ սոցիալական նպաստ ստանալու, որոշում է կայացրել Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրական եզրակացություն կազմելու մասին՝ Ա.Մանուկյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով: Մեղադրողի կողմից Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքի ծավալում ներառվել է նաև դատարանում քրեական գործի քննության ընթացքում նոր բացահայտված և հիմնավորված վերջինիս կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարելու դեպքը:

Կաշառք տալու նախաձեռնությունը Գ.Վարդանյանի կողմից առաջինը ցուցաբերելու փաստը, ինչպես նաև Ա.Մանուկյանի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքը հաստատվել են նաև հետագա դատական նիստերին վկաներ Դ.Մարդանյանի և Ա.Մանուկյանի օգնական Ս.Նաջարյանի ցուցմունքներով և դատաքննության ընթացքում հետազոտված այլ ապացույցներով:

Մեղադրող Տ.Ոսկանյանը տվյալ դատական քննության ընթացքում հաստատված համարելով Գ.Վարդանյանի կողմից Ա.Մանուկյանին առերևույթ կաշառք տալու դեպքը, տվյալ քրեական գործով հաջորդ դատական նիստին Գ.Վարդանյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը Ա.Մանուկյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ՝ վերջինիս նկատմամբ պատիժ նշանակելով 4 տարի ժամկետով ազատազրկումը և պետական ծառայության ոլորտում պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ 3 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարելու համար Ա.Մանուկյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ազատազրկման 2 տարի ժամկետով և պետական ծառայության ոլորտում պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ 2 տարի ժամկետով: Կիրառելով հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կանոնները՝ Դատարանը Ա.Մանուկյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել 6 տարի ժամկետով ազատազրկումը և պետական ծառայության ոլորտում պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ 5 տարի ժամկետով:

Դատարանը Գ. Վարդանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով և վերջինիս նկատմամբ պատիժ նշանակել 1 տարի ժամկետով:

2015 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է բերել Ա.Մանուկյանը՝ փաստարկելով, որ քրեական գործում բացակայում է որևէ ապացույց, որը վկայեր իր կողմից Գ.Վարդանյանինց կաշառք ստանալու մասին, որն իրականցվել է իր լիազորությունների մեջ մտնող գործողություն կատարելու համար: Ա.Մանուկյանը չի ժխտել Գ.Վարդանյանից գումար ստանալու հանգամանքը, սակայն ասել է, որ այդ գումարը վերցրել է պարզապես՝ ի սկզբանե նպատակ չունենալով Գ.Վարդանյանին ներառելու «Փարոս» ծրագրում:

Քննելով վերաքննիչ բողոքը՝ **2017 թվականի դեկտեմբերի 17-ին** Վերաքննիչ քրեական դատարանը, հաշվի առնելով գործում առկա ապացույցները և հաստատված համարելով Ա.Մանուկյանի կողմից՝ Գ.Վարդանյանից գումար ստանալիս «Փարոս» ծրագրում վերջինիս ներառելու մտադրության ի սկզբանե բացակայությունը, որոշում է կայացրել մասնակի բեկանել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռը, և Ա.Մանուկյանի կողմից Գ.Վարդանյանից 37.000 ՀՀ դրամ գումար վերցնելու փաստը 311-րդ հոդվածի 1-ին մասից վերաորակել 178-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և Ա.Մանուկյանի նկատմամբ նշանակել պատիժ 3 տարի ժամկետով: Կիրառելով հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կանոնները՝ Դատարանը Ա.Մանուկյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել 5 տարի ժամկետով ազատազրկումը և պետական ծառայության ոլորտում պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ 2 տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտի դեմ 2017 թվականի դեկտեմբերի 28-ին Վճռաբեկ բողոք է ներկայացրել Ա.Մանուկյանը՝ փաստարկելով, որ ստորադաս դատարանները, իրեն մեղավոր ճանաչելով՝ առաջին ատյանի դատարանը կաշառք ստանալու մեջ, իսկ Վերաքննիչ դատարանը՝ կաշառք ստանալու պատրվակով խարդախություն կատարելու մեջ, թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ուստի, խնդրել է բողոքը վարույթ ընդունել և բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և իրեն արդարացնել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 10-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Առկա՞ է արդյոք մինչդատական վարույթի, այդ թվում՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հետ կապված դատավարական իրավունքի խախտում (խախտումներ): Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Առկա՞ է արդյոք առաջին ատյանի դատարանում մեղադրողի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտում (խախտումներ): Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Առկա՞ է արդյոք առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտում (խախտումներ): Հիմնավորե՛ք պատասխանը

Հարցադրում 4.

Առկա՞ է արդյոք Վերաքննիչ վերանայման հետ կապված դատավարական իրավունքի խախտում (խախտումներ): Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 5.

Առկա՞ է արդյոք Վճռաբեկ վերանայման հետ կապված դատավարական իրավունքի խախտում (խախտումներ): Հիմնավորե՛ք պատասխանը: